

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիրը և Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձրացումը

Մարտահրավերներ՝

- Էլեկտրաէներգիայի արտադրության 70%-ը կախված է ներմուծվող վառելիքից՝ միջուկային վառելիքից և գազից,
- Տնտեսության մյուս բոլոր ոլորտների համար պահանջվող բնական գազի 100%-ը ներմուծվում է,
- Էլեկտրամատակարարման հզորության վերահաս ճեղքվածքը 400ՄՎտ-ի չափով մինչև 2020 թվականը:

Նպատակներ՝

Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի Հայաստանի Ներդրումային պլանի (ՆՊ) նպատակն է խթանել մասնավոր ներդրումները վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներում, որոնք փորձի բացակայության, բարձր կապիտալ ծախսերի և այլ բազմազան պատճառներով չեն դիտարկվել որպես երկրում կիրառելի տարբերակներ:

ՎԷԸԾ աջակցությունը կարող է օգնել երկրաջերմային կայանների և արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ-ների աստիճանական ներդրմանը հետևյալ եղանակներով՝

- (i) Կարկառի երկրաջերմային տեղամասում հետախուզական հորատումների սուբսիդավորման միջոցով՝ կլանելով երկրաջերմային էլեկտրաէներգետիկայի համար ծրագրի զարգացման որոշ ռիսկեր,
- (ii) մասնավոր ներդրողների միջոցով օգնելով ֆինանսավորելու երկրում 40-50 ՄՎտ հզորությամբ առաջին արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ-ների կառուցման ծրագրերը՝ մինչև ժամանակ ՎԷԸԾ միջոցների օգտագործմամբ նվազագույնի հասցնելով դրանց ազդեցությունը սակագների վրա,
- (iii) խթանելով երկրաջերմային պոմպերի և արևային ջրատաքացուցիչների ավելի լայն կիրառումը կենցաղային, արդյունաբերական և այլ կոմերցիոն նպատակներով:

Սպասվում է, որ 40 ԱՄՆ դոլարի չափով ՎԷԸԾ ֆինանսավորումը կներգրավի մոտ 4.5 անգամ ավելի շատ ներդրումներ մեծամասամբ մասնավոր հատվածի կողմից և կխթանի Զարգացման բազմակողմ բանկերի (ԶԲԲ), այդ թվում ԱԶԲ, ՎԶԵԲ և ՀԲԽ կողմից առևտրային վարկավորումը:

Ակնկալվող գլխավոր արդյունքները

Վերոնշյալ ծրագրերը կնպաստեն վերոնշյալ տեխնոլոգիաների լայնամասշտաբ զարգացմանը: ՎԷԸԾ Հայաստանի համար Ներդրումային պլանից ակնկալվում են հետևյալ գլխավոր արդյունքները.

1. Էներգետիկ անվտանգության բարձրացումը՝ մեծացնելով վերականգնվող էներգիայի ներքին ռեսուրսներով (40-50ՄՎտ հզորությամբ արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ-ներ, ջերմային պոմպեր և արևային ջրատաքացուցիչներ) արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժինը և ճանապարհի հարթելով Կարկառի տեղամասում հնարավոր երկրաջերմային էլեկտրակայանի համար, եթե հետախուզական հորատումները հաստատեն ռեսուրսի առկայությունը.
2. Արդյունաբերական մասշտաբի արևային և երկրաջերմային էներգետիկայի խթանումն ու ընդլայնումը մասնավոր ներդրումների միջոցով: Սա նաև կլիթանի տվյալ բնագավառի հետազոտություններն ու ուսումնասիրությունները (ՀնՈւ), որոնք ավանդաբար եղել են հայաստանյան հետազոտողների և ակադեմիական ոլորտի աշխատողների ուշադրության կենտրոնում:
3. Էլեկտրամատակարարման հզորությունների 400ՄՎտ չափով վերահաս ճեղքվածքի կրճատում էլեկտրաէներգիայի նկատմամբ կանխատեսվող պահանջարկը բավարարելու նպատակով:
4. Վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների տեղադրման, շահագործման և պահպանման հետ կապված աշխատատեղերի ստեղծում: Աշխատուժի կրթում այս տեխնոլոգիաների շահագործման վերաբերյալ:
5. Ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատում ներկա վիճակի շարունակման սցենարի համեմատությամբ:

ՎԷԸԾ վերաբերյալ

Վերականգնվող էներգետիկային ընդլայնման ծրագիրը ցածր եկամտային երկրներում Ռազմավարական կլիմայական հիմնադրամի (ՌԿՀ)՝ Կլիմայական ներդրումների հիմնադրամի (ԿՆՀ) շրջանակում գործող երկու հիմնադրամներից մեկի թիրախային ծրագիրն է: ՎԷԸԾ ստեղծվել է ընդլայնելու վերականգնվող էներգիայի լուծումների ներդրումը և մեծացնելու վերականգնվող էներգիայի շուկաները աշխարհի ամենաաղքատ երկրներում: Ծրագրի նպատակն է փորձարկել և ցույց տալ զարգացման ցածր ածխածնային ուղիների տնտեսական, սոցիալական և բնապահպանական կենսունակությունը: ՎԷԸԾ-ն աջակցում է այնպիսի տեխնոլոգիաների տարածմանը, ինչպիսիք են արևային, հողմային, կենսաէներգետիկական, երկրաջերմային և փոքր հիդրոէներգետիկական

տեխնոլոգիաները: Այն խթանում է տնտեսական աճը՝ համագործակցելով երկրների կառավարությունների հետ վերականգնվող էներգիայի շուկաներ ստեղծելու, մասնավոր հատվածին ներգրավելու և էներգիայի օգտագործման արդյունավետ եղանակներ գտնելու նպատակով:

ՎԷԸԾ և Հայաստանի համար Ներդրումային պլանի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար այցելել՝
www.climateinvestmentfunds.org/cif/node/67